Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

91.99
-83

241

1

~~203~~

Ն. ՉԱՐԵԱՆ
9 NOV 2011
891.99
Չ-83
357

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(Փորձեր)

Հ.Ս.Ս. գիտ. հանրության գրադարան
Գր. Ի. Բաշ-ի անվ. Հ.Ս.Ս.
Հայաստանի գիտ.
ОБЩЕННЫЙ СОЮЗ
Ա. Մալխասեանի անվան

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպ. Ա. Մալխասեանցի: ☆ Тип. А. Малхасянца.
1903

13.04.2013

29891

Дозволено цензурою, 8 октября 1902 г. гор. Тифлисъ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-Ա
Ա. Մ. Ա. Մ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

3354-84

## ԻՄ ՏՈՒՆԸ

Իմ տունն է այստեղ, այն օտար երկրում,
Որի տէրերն են վիշտն ու տանջանք.
Ուր կեանքն է մեռած, ուր կեանքը տրտում,
Ուր միշտ լսւում է ախ ու հառաչանք։

Այնտեղ անլեզու մարդիկ են ապրում,
Զրկուած աշխարհի անհուն բարիքից,
Բաղդի հարուածը լուռ, անխօս տանում,
Ոչինչ չեն տեսնում բացի արցունքից։

Ցրտաշունչ օրին սառած ու կապտած,
Կուչ եկած շրջում ստուերի նման.
Որպէս կմախքներ ձեռները պարզած
Զոր հաց են մուրում առանց օթևան։

Ես մանուկ կեանքից այնտեղ նետուեցի,
Եւ այնտեղ ուսայ լալ ու հառաչել.
Այնտեղ ես թշուառ կեանքին վարժուեցի,
Եւ ինձ նմանի արցունքը սրբել.....

1900 թ. 26-ին նոյեմբ.

* * *

Թախծոտ է հոգիս... ոհ հասիր մուսա՜
Վշտոտ երգերի խուլ մոտիւներով,
Ցաւատանջ սրտի մեղմ օրօր կարդա՝
Որպէս մի մանկան վեհ գուրգուրանքով։

Թո՛ղ ես արբենամ, քո թովիչ երգի
Ցաւոտ օրօրի լացող ձայնի տակ.
Կրկին իմ հոգին մռայլ յոյզերի
Թո՛ղ մի ծով դառնա՝, մի ծով անյատակ։

Օ՜, պատմիր մուսա՝, աղ արտասուքի
Ակնոտ ու լալկան տխուր հէքիաթներ.
Քայքայուած սիրտս հանգիստ կ'գտնի
Վշտի աշխարհում... երգիր անվեհեր։

Թո՛ղ որ տանջանքի անհուն ովկիանում,
Ուր որ մշտական թախիծն է տիրում,
Այնտեղ երազեմ ես լացի աշխարհ,
Որտեղից խինդը հեռու է փախչում։

Երգիր, օ՜ մուսա, թէպէտ քո ձայնի
Թոյն հեկեկանքով ղրկես գերեզման,
Որտեղի նիրհը՝ զազիր, գարշելի՜...
Օ՜, այդ էլ հոգ չէ, երգիր դու միայն։

1901 թ. 8-ին Մեպտ.



## ՄՌԱՅԼ Է ՄԵՐ ՇՈՒՐՋ

Մռայլ է մեր շուրջ. ամպամած օրեր.
Ամ տգիտութեան անհուն խաւերում
Վխտում են մարդիկ, կարօտած սրտեր,
Սրբազան լուսոյ համար հառաչում։

Եւ ասպարիզում այն վսեմ գործի
Բազմած են տգէտ, հոգով աղքատներ,
Ու որպէս տիրող սուրբ ասպարիզի
Տարածում յավերժ չարութեան սերմեր։

Օ՜, այնտեղ երբէք չէ ժպտում արև.
Մարդիկը այնտեղ խոր քուն են մտած,
Ճահիճ է աղտոտ, ճահիճ արդարև,
Ուր որ լսւում է միշտ հառաչ ու լաց։

Օ՜ առա՛ջ ընկեր, դէպի այն աշխարհ,
Որտեղ իդէալներ երբէք չեն ծնւում,
Այնտեղ քարոզենք սէր ու գալափար —
Օգնութեան կարօտ ձայներ եմ լսում։

Ձեռք ձեռքի տուած ազատ համարձակ,
Խաւարը պատռող երգեր մենք հիւսենք.
Թնդա՝ խաւարը մեր երգից արծակ—
Նոցա իդէալի երկիրը ցուցնենք։

1901 թ. 25-ին օգոս. Բաւասանի

## ՅՆՈՐՔ

Որպէս մի արծիւ, ազատ ու հպարտ վեհ եթերային,
Սիպտակ սմպերի հսկայ կատարից ես երգ եմ հնչում,
Քնած աշխարհին օրօր եմ կարդում, անդորր, մեղմագին,
Եւ մարդիկ դևեր չռած աչքերով փառքիս նախանձում։

Ու գլխուս վերև ծերուկն Աստուած նստած աթոռին,
Աշխարհ է դիտում, խրոխտ հայացքով նայում ու ժպտում,
Հրեշտակները շրջան բոլորած, հեզիկ խմբովին.
Երգեր են հիւսում, աղու սրտագին, հզօրին ներքում։

Նայում եմ ներքև, գերի աշխարհին, հեռու շատ հեռու,
Ամեն ինչ լռիկ, գլուխ խոնարհած, ինձ է ողջունում
Եւ դև մարդկերանց քունն է վրդովում նոքա սրտաբուղ
Հեզ աղօթքներով իմ վսեմ գահին ջերմ երկրպագում։

1901 թ. 9-ին օգոս Շուշի

## ԵՐԱՋ

Ես ազատութեան արնաներկ կռւում
Վիրաւոր ընկած, դեղնած թուլացած,
Շուրջս ռազմի երգեր են հնչում,
Ես հրճւում ուրախ մահու գիրկն ընկած։

Եւ ես տեսնում եմ. ալ—վերջալուսին,
Երբ վերջին շողեր գրկում են լեռներ.
Եռ ոգևորուած, քնար իմ ձեռին,
Հնչում եմ տխուր լալագին երգեր։



Մարդիկ հիացած յառած աչքերով,
Ովսաննաներով ինձի պսակում
Եւ ես էլ հպարտ, խրոխտ հայացքով
Նայում եմ նոցա և գաղտնի հրճւում։

Ողջ արար աշխարհ փառքիս նախանձում։
Մարդիկ ծնկաչոք ջերմ աղօթքներով.
Իմ քանցքների ծայրերն են պագում,
Եւ ես հրճւում եմ ուրախ ժպիտով։

Եւ ծաղիկները դիւթուած հիացած
Զով սօսափում են, անոյշ խնկագին.
Աստղերը երկնից նախանձով լեցուած
Իրանց մռռանում թափւում են գետին։

Միայն մի չքնաղ փէրի աննման
Արհամարհանքով իմ փառքը ծաղրում
Նա ինձ նայում է, ժպտում հեգնական,
Ես այդ տեսնում եմ... գաղտնի արտասւում։

1901 թ. նոյեմ. 19-ին

* * *

Վեհ ճշմարտութեան մարտիկ եմ արի,
Իմ դրօշակս զուրկ է կեղծիքից.
Անարգ չարութեան հզօր թշնամի
Նա չէ ճկուելու որոտ կայծակից։

Աշխարհը նոյն իսկ թէ իմ դէմ զինուի,
Նեխուած, շաղախուած խորքում մթութեան

Եւ չարութիւնն էլ կատաղի յուզուի,
Ես կմնամ զինուոր վեհ ճշմարտութեան։

Ես մարդկանց ընդէմ նորա զէնքերով,
Պիտի մարտնչեմ միշտ յուսով լեցուած,
Աշխարհն ինձ ծաղրէ անարգ ժպիտով,
Նա պիտի լաղթէ. թէպէտ հալածուած։

Մարդիկ չքանան, երկիրն էլ փոխուի,
Ամբողջ տիեզերք իմ դէմ յանդիման,
Սոսկ չարութեան հետ իւր դաշը կապի.
Դրօշս կմնայ կանգուն, անսասան։

Վեհ ճշմարտութեան մարտիկ իմ արի,
Անարգ չարութեան հզօր ախոյեան
Աշխարհը նոյն իսկ, թո՛ղ իմ դէմ զինուի,
Ես միշտ յուսառատ կմնամ անսասան

1901 թ. 31-ին դեկտ. Երեւան

## ԵԹԷ ԻՐԱՒ Է

Եթէ իրաւ է՝ մեռնողի հոգին.
Թռչում է դէպ վեր, կապոյտ երկնքում
Նոր կեանք է մտնում. և այնտեղ կրկին
Ուրախ ու անհոգ, երջանիկ ապրում։

Թէ իրա՛ւ, այնտեղ խոտերն են դալար,
Աբի փոխանակ միշտ կաթ է բղխում.
Երկինքը անամպ, աստղեր անհամար,
Լոկ ծիածանն է շողում շողշողում։



Թէ մարդիկ այնտեղ ծանօթ չեն վշտի,
Անոահման սէր են դէպ իրար տածում
. . . . . .
Հոգիքը այնտեղ երբէք չեն մեռնում։

Ապա կուզէի մեռնել որ հոգիս
Դէպ անմահութեան տաճարը գիմէր
Կուզէի կորչել այս նենգ աշխարհից,
Որ հոգիս այնտեղ յաւիտեան ապրէր։

1902 թ. 4-ին յունուարի. Երեւան

## ԳԻՇԵՐՈՒԱՅ ԺԱՄԻՆ

Համայն բնութիւն խոր քուն է մտած
Ամեն ինչ նիրհում խաւարի գրկում.
Վերև ժպտում է ծերուկն Աստուած,
Ներքևում մարդիկ երազ են տեսնում։

Ես միայն անքուն, մէջ կէս գիշերին,
Քունն իմ աչքերից հեռու է փախչում.
Սիրտս վառւում է և կրծքիս տակին
Այրող սև վշտեր չարաչար վխտում։

Նանի՛, այդ ինչ ես նայում իմ դէմքին
Այդ ինչ սրբերի անուն ես յիշում.
Օ՜, խենթ ես կարծում քո սիրած բալին
Չար ոգիներին նզովք ես կարդում։

Իմ դարդը ջոկ է զուր ես աղօթում,
Տես, սիրտս կրակոտ այրւում է, վառւում.
Նանի՛, խե՜ղճ Նանի՛, անմիտ աղօթքով,
Անհուն վշտերիս վերջ տալ ես ուզում։

Հեռու, շատ հեռու, սարերի ետև
Այն չքնաղ կոյսն է իմ սիրտը այրում—
Նորանից զատուած չկայ ինձ արև.
Չկայ սփոփանք քո աղօթքներում։

Խաւար է տիրում համայն աշխարհին,
Մարդիկը այնտեղ երազ են տեսնում
Իմ սիրտը միայն, դարդոտ, լալագին
Անքուն՝ օձի պէս, տանջւում գալարւում։

1902թ. 10-ին յունուար, Երեւան

* * *

Ա՜խ, կուզէի ես մեղմ նիրհել, վառ աստղերի լուռ ցանցում
Աշխարհային ցաւից, հոգսից իսպառ կտրած իմ հոգին.
Հոգիս թաղուած եթերական անուրջների ովկիանում.
Թող ինձ գրկէր դիւթիչ քունը մեղմագին։

Իմ չորս կողմը պար բոլորած. հրէշտակներ խմբովին
Եդեմական անոյշ երգեր ինձ երգէին մշտական.
Ես հրճուէի գլուխս յենած մարմար լուսնի վեհ գահին,
Ապա լայի, արտասուէի, նման անհոգ մի մանկան

Որ զեփիւռը մրմնջալով, մեղմիկ ինձի օրօրէր.
Աստղերի հետ զրոյց մտած ես երազներ տեսնէի,
Որ իմ հոգին գէթ երազում դիւթիչ բոյրը վայելէր
Կախարդական այն աշխարհում արտասուէի ախ, լայի...

1902 թ. 18-ին մարտի Երեւան



## ՑՆՈՐՔՆԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ

(Օբոլենսկիյ)

Սիրելի ընկեր, դու ասում էիր, որ ցնորքներն են
Կեանքը զարդարում և դու ապրում ես լոկ նոցա համար
Որ առանց նոցա սոսկ ստուերն է մեր կեանքը արար,
Ծաղկանց պսակից խաբուսիկ հրճուող լոկ ժպիտներն են։

Ես ափսոսում եմ քո ջահել հոգուն տանջուած չարչարուած
Երբէք, օ՜, երբէք չ՝պիտի ստենք մեր կեանքը դաժան,
Որի մէջ խիզախ մուտք են գործել տանջանքն ու լաց,
Որոնք կազմում են նորա պսակը վեհ կախարդական։

Կեանքն է ամեն ինչ, միայն պիտոյ է ղեկավար իդեալ
Ով որ կուրացած վառ ցնորքների մութ մառախուղից
Իսպառ կոխոտէ վարդ ծաղիկները այս կեանքի գրկից
Նա պիտ կորցնէ այն հրաշալի վեհ ղեկը իդեալ։

Օ՜, նա ցնորք չէ. նա թարմ ծաղիկ է՝ բուսած հաստ բնին
Նոյն հէնց այն կեանքի. վեհապանծ հսկայ որպէս և աշխարհ
Իսկ ցնորքները... այդ երազներն են... ապրել անդադար
Այդ ցնորքներով. ասել է նորից շինել մի բագին

Շուշի

## ԾՈՎԻ ԱՓԻՆ

Նիրհում է ծովը, նիրհում մեղմագին,
Երկչոտ խաւարի գունաթափ գրկում.
Նիրհում է խաղաղ նայում երկնքին,
Փայլող աստղերը անխռով համբում։

Օ՜, որքան վսեմ և կախարդական
Հանգիստ է նիրհը այն գիշերային.
Անուրջք և երազ և խոհեր մահուան...
. . . . . .

Ծո՛վ, բաց արա՛ գիրկդ, թո՛ղ որ ես նետուեմ
Քո պաղ խորքերում անհուն ջրերում,
Անդարտ ծոցի մէջ յաւիտեան նիրհեմ,
Ամբողջ էութեամբ թաղուած անուրջում։

Գիտեմ, քո ծոցում ընդմիշտ են խեղդուում
Մարդկան կեանքի հետ ցաւ ու հառաչանք,
Եւ կասկածը ժանդ հոն չէ սպանում
Բողբոջուն, մատաղ, դեռափթիթ մի կեանք։

Հոն՝ քո ծոցի մէջ չկան արցունքներ
Աղի հեղեղուած անքուն գիշերի.
Ա՜խ, հոն չեն լսուում լալկան մրմունջներ
Կեանքից բեզարած անբաղդ թշուառի։

Բաց արա՛ գիրկդ, թո՛ղ որ ես նետուեմ
Այս գաղտնի պահուն, երբ ցաւ ու վշտեր.
Լռիկ նիրհում են... թո՛ղ ես էլ նիրհեմ,
Հոն քո ջրի մէջ ամենքից դատուած։
Նիրհեմ, օ, նիրհեմ։



Որ արշալուսին պլպլան արև
Ալիքի վերան գտանէ իմ դին,
Որպէզի, օ, ծով, էլ այսուհետև
Սև վիշտ չտեսնէ իմ մատաղ հոգին։

Որ դողդողալով քո սառն ալին
Երկչոտ օրօրով, թախծոտ մրմունջով
Դէպ՝ ափ շպրտէ իմ քարացած դին
Յուղարկաւորէ սրտառուչ ողբով։

Բաց արա՛ գիրկդ, հանգիստ եմ ուզում,
Կեանքից բեզարած իմ ծերուկ գլխին.
Երկնից երազով նիրհել եմ ուզում
Քո սառն ծոցում ալիքի կրծքին....

1902 թ. մարտ 28-ին Էջմիածին

***

Մի՛ լար իմ չքնաղ, մի՛ լար իմ անգին,
Փշրած յոյսերի անապատ գրկում.
Հոգով անձնատուր դառն վշտերին
Սիրտդ ալեկոծ անվերջ փոթորկւում։

Գիտեմ, արցունքով կուզես մի վայրկեան
Հպարտ անցեալի յուշերը գրկել
Երջանիկ կեանքի դժնդակ վախճանն
Աղի յուսահատ արցունքով յիշել։

Օ՜, եթէ չլինէր արցունքը կեանքում
Ի՞նչ պիտի անէր ցաւատանջ հոգին,
Ի՞նչ պիտի անէր խեղճը աշխարհում...
—Աքցունքը դեղ է վիրաւոր սրտին։

Մի լար, իմ չքնաղ, նա գնաց արդէն
Հեռւում ծածկելու անամօթ գործեր,
Նա խաբէութեամբ քաղեց քո սրտէն,
Մատղահաս կեանքի բոյրն ու վայելքներ։

Նա քեզ մոտ չեկաւ սիրոյ ծարաւով,
Եւ քեզ չէր սիրում անկեղծ ու վսեմ
Նա քեզ համբուրեց լժէ դիմակով,
Ապա ձգդելով նայեց ժպտադէմ։

Մի լար իմ չքնաղ, մի լար իմ անգին
Փշրած յոյսերի յուսահատ գրկում,
Հոգով անձնատուր դառն վշտերին
Սիրտդ ալեկոծ յուզւում, փոթորկւում։

1902 թ. 18-ին ապրիլի Երեւան

* * *

Ա՜խ, մի հարցանէք. թէ ո՞ւր եմ դիմում,
Կեանքի ծարաւով հոգիս պապակած,
Փշրած յոյսերի տարափն իմ սրտում,
Վհատ ամպերը ճակտիս կուտակուած։

Ո՛չ ես չեմ դիմում գարնան պերճ գրկում
Երջանիկ, փարթամ, անհոգ ապրելու։
Ոչ պատանեկան խանդ ցնորքներում,
Ամպերից վերև վառ երազելու։—



Ճակատս զուգած կեանքի խորհրդով,
Դէպ անապատն եմ անդադար դիմում...
Անձնազոհութեան սրբազան մտքով.
Թշուառի լացն է սիրտս փոթորկում։

Դիմում եմ այնտեղ. ազատ կռուելու
Ճշմարտութիւնը թև թիկունք առած
Գնում եմ այնտեղ կեանքս զոհ տալու
Արդարադատութեան անաչառ անուան։

Գնում եմ լալու և հառաչելու,
Հիւանդ եղբորս խոնաւ խրճիթում.
Գնում եմ այնտեղ արցունքի ծովում,
Վշտի աշխարհում լալու ողբալու։

1902 թ. 1-ին մայիսի

## ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Բայց ինչ, ես երթամ խոր գլուխ տալու,
Հոկայ կեղծիքի անարժան դահին.
Երթամ կեղծիքի առաջ փռելու,
Կեանքի աւետիք դալար ձիթենին

Մարդիկ խեղկատակ կեանքի սուրբ բեմին
Անարժանութեամբ պղծում ամեն բան,
Քոռ անամօթ դիմակներ ճակտին,
Ցանում աշխարհում սերմեր մոլութեան

Ահա՛, այդ մարդիկ ուզում են այսօր
Անարդ ձեռքերով շղթաներ դնել
Իմ ազատ սրտի ազատ յոյզերին,
Եւ ազատ միտքս ընդմիշտ կաշկանդել։

Ուզում են այսօր նենգութեամբ խեղդել,
Բարձր ղողանջը ազատ երգերիս
Եւ արգար ձայնս անհետ կորցնել
«Ստրուկ» դրոշմել համարձակ ճակտիս

Բայց ո՛չ... օ, երբէք, երբէք չեմ կարող.
Ճշմարտութիւնը ոտքի տակ ձգել,
Խղճի տարափը խեղդել լռութեամբ
Եւ ինչո՞ւ-ինչո՞ւ... որպէս զի ապրե՞լ...

Որպէզի ցածութեամբ և ստոր հոգով,
Լիզել կեղծիքի տիտան պատուանդան
Ստրուկ էութեամբ ստրուկ խոհերով
Ապրելու համար լինել ախոյեան
Վեհ ճշմարտութեան։

Ուրեմն եկէք, մարդիկ հրէշներ,
Խիզախ գլուխս ծաղրով զուգելու.
Եկէք կանգնած եմ անվախ, անվեհեր,
Ձեր կարող գահին ես էլ ծաղրելու։

Բայց ա՛խ, իմ ծաղրը-արցունք է աղի,
Եւ իմ քրքիջը գթութեան նշան.
Ես քեզ ներում եմ, մարդկային հոգի,
Թէպէտ լկտի ես. թէպէտ անարժան։

1902 թ. 7-ին մայիսի Երեւան։



* * *

Էհ, մնաս բարով, արդէն իմ սրտում
Հրդեհուած սիրոյդ կայծերը մարան.
Տանջանքի բովից ես դուրս եմ գնում
Դէպի անհոգ կեանք, գիրկ երջանկութեան։

Ես պիտի մոռնամ աչերիս ցօղած
Արցունքի հեղեղ, ծով կտրած շիթեր.
Ես պիտի մոռնամ վշտով անցուցած,
Տանջանքի ժամեր, անքուն գիշերներ։

Եւ այնտեղ, այնտեղ, հեռու քեզանից,
Սև մոռացութեան կենսատու գրկում.
Ալ ծաղիկների խնկահոտ բոյրից,
Ես կարբենամ նոր սիրոյս գրկում։

Եւ այնտեղ նորից կը վերածնեմ,
Իմ մէջ քարացած գողտրիկ վեհ երգեր.
Այնտեղ ես կեանքի սաղմեր կ՝հիւսեմ,
Աշխարհի համար փրկարար սաղմեր։

Դէհ, մնաս բարով. արդէն իմ սրտում,
Հրդեհուած սիրոյդ կայծերը մարան.
Տանջանքի բովից նոր կեանք եմ մտնում,
Կենսատու գիրկը խուլ մոռացութեան

25 փետր. 1902 թ. Երեւան

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
2002-Арм
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3354-84

* * *

Բայց ո՛չ... ես ծնայ վշտերի ծովում,
Հեռու աշխարհի փարթամ խնջոյքից.
Ամայի կեանքի անապատ գրկում,
Մի ամպոտ երկրում, մռայլ փշալից։

Խաբուսիկ աստղի նենգ փայլից դիւթուած,
Փարթամ յոյսերով առաջ գնացի.
Դաժան պատկերով կեանքը իմ դիմաց
Ահեղ քրքջաց... շուար մնացի։

Հոգիս յուսահատ, սիրտս խորտակուած,
Մտքերս գունատ խինդ բաղդի մասին,
Որպէս դաժան դև ամենից զատուած
Ապրում եմ, ինչո՞ւ... ինչ փոյթ աշխարհին։

Ապրում աւերուած, դառն վիճակով.
Երջանկի մասին դողդոջ խորհելով.
Տհաս, անտեղեակ կեանքի խորհրդին,
Ապրում եմ ինչո՞ւ... ինչ փոյթ աշխարհին։

Ցաւատանջ էակ, անցեալ երազով
Ապրեր միշտ չարքաշ, միշտ յուսահատուած.
Ապրեր միմիայն յուսահատ երգով,
Վշտերի ծովում ամենից զատուած։



* * *

Անողոք կեանքի վայրագ ժպտի դէմ
Զգայուն սիրտս բեկ-բեկ խորտակուեց.
Զուգուած աշխարհը անարգ, թխպադէմ
Սևացաւ գլխիս, ինձ խոժոռ նայեց։

Ծաղկած յոյսերի փարթամ պարտիզում,
Վարդ ցնորքների բոյրից արբեցած,
Դէպի երջանիկ կեանք էի դիմում,
Խիզախ ու խանդոտ դրօշս պարզած։

Ես վարդ սիրեցի, գեղ կոյս սիրեցի,
Եւ հոգիս ապրեց մեղմ անուրջներում.
Բայց ա՜խ, շատ շուտով նրանց ատեցի,
Սև վիշտ բուն դրեց իմ մատաղ կրծքում։

Եւ ջահել կեանքիս գարնան օրերին,
Վշտի սև ամպեր մէկէն պատեցան.
Եւ սիրտս ընկճուեց նոցա դիմացին,
Ա՜խ, վարդ յոյսերս շատ վաղ թոշնեցան։

Անողոք կեանքի վայրագ ժպտի դէմ,
Զգայուն սիրտս բեկ-բեկ խորտակուեց.
Ջահել խորշոմած, ծերուկ տխրադէմ,
Կեանքի նոր խորհուրդ ինձի պսակեց։

14-ին մարտի 1902 թ. Երեւան

## ԽՈՀԵՐ

(հատուած)

Խորին գիշեր է. նիրհում է աշխարհ
Դիւթափայլ լուսնի լոյսից հեղեղուած.
Զորում երգում է ուռին անդադար,
Ծաղկունք սօսափում մեղմիկ ու կամաց։

Խոխոջուն առուն յստակ մրմնջում.
Յամր դողում են ծառի տերևներ.
Աշխարհը անդորը ու գաղտնի հրճւում,
Եւ իմ ականջին խօսում են հովեր։

Քնիր օ, քնիր. ծանր մտքերից
Հեռացիր իսպառ. քնիր, երազում
Դու ելք կ'գտնես տաղտուկ խոհերից,
Դուն էլ քուն մտիր, աշխարհն է նիրհում։

Քնիր, որ ուժեղ վաղ առաւօտեան,
Կեանքի խորհրդով պսակուած զարթնես.
Քնիր, որ վաղը հերոսի նման,
Թշուառի լացին ունկնդիր լինես։

Կեանքի խորհուրդն է.-խեղճի արցունքներ
Դուրթ կարեկցաբար սրբել աչքերից.
Սիրել թշուառի լաց ու մրնունջներ,
Նոցա երգերը թախծոտ վշտալից։

Գիտեմ, դողում ես այս փշոտ ճամպի
Սկզբին կանգնած, հոգով սարսափում.



Օ՜ մի վհատիր, մացառոտ ճամպի
Սուրբ յաղթանակը դափնեայ է տրւում։

Լացիր թշուառի լալկան վշտերով,
Հեղեղի նման թափիր արցունքներ.
Այդ լացից յետոյ անհուն հրճուանքով
Սիրտդ կը խնդայ ազատ, անվեհեր։

Ծանր է խաչը... տատասկոտ կեանքի,
Փշոտ ասպարէզ, խաւար դժնդակ.
Մեռած է շուրջդ, առանց արևի,
Անվերջ լսում ես ողբ սև հառաչանք։

Բայց ախ, խոնջացած գործերի վերջին,
Հոգով պապակած վեհութեան գրկում.
Պիտ հանգիստ առնես դափնիք քո ճակտին,
Խոհուն, երազուն... աստղերի ցանցում։

24-ին մարտի 1902 թ. Երեւան

## ՆՈՒԷՐ

օր. Մ. Շ-ին

Սիրում եմ ես քեզ, որպէս իմ ընկեր,
Կեանքի դժուարին նեղ բոպէին.
Որպէս զինակից խանդոտ անվեհեր,
Ծանր կռուի մէջ, փոթորկի ժամին։

Երբ որ ամենից իսպառ թողնուած,
Յուսահատ, տրտում, կեանքից ձեռք քաշած
Ես մահ կրկանչեմ հոգով ցաւատանջ,
Ահա այն ժամին կանգնիր իմ առաջ։

Քո նուրբ շրթունքով խրախոյս կարդա՛
Կեանքի հարուածած անբաղդ նաւակին,
Որ էլ յոյս չունի ոչնչի վերայ,
Որ չէ հաւատում մարդկանց, աշխարհին։

Գիտցիր, իմ անգին, որ սիրտս նորից
Անվհատ կռուի տենչով կրվառուի.
Յայնժամ ես հզօր կլինիմ, սիրելիս,
Եւ կեանքը ծանր ինձ չի երևի։

1-ին յուն. 1902 թ, Երեւան

## ՆՈՒԷՐ օր. Մ. Շ-ին

Ես յոգնած էի, կեանքից խոնջացած,
Սիրտս-թոյլ գարկում, երկչոտ բաբախում,
Որպէս վիրաւոր վանդակում փակուած,
. . . . . .

Ես յոգնած էի, կեանքից խոնջացած,
Մենակ, անընկեր լայնարձակ կեանքում.
Ամենից ատուած, ամենից զատուած,
Փշրած յոյսերի տարափն իմ սրտում։

Որպէս ուրուական դռնէ-դուռ ընկած,
Ես շրջում էի առանց նպատակ.
Լալկան, յուսահատ ու շաշտս կոտրած,
Վարդ ցնորքներից սիրտս աւերակ։

Ես եկայ քեզ մօտ, յուսահատութեան,
Արցունքն աչերիս, և լալիս էի



Որպէս մի մանուկ, սև մոռացութեան
Կարօտ էր հոգիս և սփոփանքի։

Դու գիրկդ առար անսահման սիրով,
Եւ փայփայեցիր որպէս մի մանկան.
Կրծքիդ սեղմեցիր անզուսպ կարօտով
Եւ ես նիրհեցի գրկում թովչութեան։

Դու ինձ ասացիր. «Կռուիր անվհատ
Կեանքի տմարդի, արնաներկ կռուում.
Ճշմարտութիւնն է աշխարհում ազատ,
Նա է փոթորկում յաղթանակ տանում»։

Յանկարծ շուրթերդ դիպան իմ ճակտին,
Ինձ պսակեցիր խրախոյսի համբոյրով,
Ես քաջալերուած համարձակ կրկին
Դրօշս պարզեցի կռուի փափագով։

2-ին յուն. 1902 թ. Երեւան



## ԴԱՄԲԱՆՆԵՐ

Լուռ դամբանները ննջումեն մեղմիկ,
Գիշերուայ թանձր, մռայլ խաւարում.
Այնտեղ խոր քնով քնում են մարդիկ,
Մայր հողի կրծքում հանգիստ են գտնում։

«Հայրեր, իմ հայրեր, ձեր քունն անխռով,
Որպէս մի անփորձ, խանդոտ պատանի
Ես ապագայի զինուոր քաջարի,
Չեմ ուզում դատել իմ անփորձ խելքով։

«Ես կամիմ լսել և ձեր խորհրդին,
Դուք մեզնից առաջ եղաք աշխարհում.
Դուք մօտ ծանօթ էք աշխարհի բանին,
Ի՞նչ է մեր կեանքը, ի՞նչ կայ երկրում»։

Հսկայ քարերը կամաց շարժուեցին,
Հողը պատառուեց և նորա կրծքից
Զորցած կմախքներ դուրսը թափուեցին,
Եւ ես լսեցի նոցա բերանից.

«Մութ է մեր կայան, խաւար մեր ուղին.
Մենք շքեղ կեանքից անմաս մնացինք.
Սև հողը նոյն իսկ մեր ոսկրներին
Չի թողնում երբէք, որ հանգիստ պառկին։

Այնտեղ աշխարհում մենք հէչ չիմացանք,
Թէ ի՞նչ է կեանքը և ի՞նչ է աշխարհ.
Ինչպէս ծնուեցինք, այնպէս էլ մեռանք,
Կեանքում ապրեցինք, նորան չիմացանք։



«Մենք նման դալար դաշտի դեղ ծաղկին,
Զուգուած աճեցինք անպտուղ չորցած,
Կրկին պառկեցինք երկրի դոռ կրծքին,
Մեր կեանքն էլ շուայդ և ապականուած։

«Աշխարհը կեանք է և կեանքը օղակ
Դառն տանջանքի, անհուն վշտերի.
Նա դարդ է, այո՛, դարդ է բովանդակ
Անփորձի համար խիստ սարսափելի։

«Եւ այդ վշտերի անսահման ծովից
Երջանկութիւնը հեռու է փախչում
Մարդ վարդ յոյսերով իւր մօր արգանդից
Միշտ հիասթափ է գերեզման իջնում։

«Բայց կեանքում միայն մի մեծ սփոփանք,
Սրբազան գործն է դառնութիւններին
Փշրում, խորտակում, կեանքը դորանով
Թեթև է, քաղցր ու մեր սիրելին։

«Բայց եթէ նորից իրաւունք տային
Ձահել ծնանել և նորից ապրել,
Մենք այն ժամանակ տաղտուկ աշխարհին
Մեր վերջին մնաս բարեաւ կուտայինք։

"Մենք կըստեղծէինք մի նոր վեհ աշխարհ,
Որի երկինքը լինէր զարդարուած.
Բիւր ծիածանաց գեղուշ ցոլքերով
Երկիրը անլեռ և մարդիկ Աստուած"։

Լուռ դամբանները ննջում են մեղմիկ,
Գիշերուայ մռայլ թանձր խաւարում.
Այնտեղ քնում են անհամար մարդիկ,
Եւ նոր աշխարհի համար երազում...

2-ին դեկտ. 1902 թ.

***

Ո՞վ է ճանաչում վշտերի ծովից
Յարութիւն առած անբաղդ թշուառին,
Արցունքն աչերին, կնճիռներ ճակտին,
Շրջում դռնէ-դուռ ատուած ամենից։

Նա իմ եղբայրն է... Անտէր, անպաշտպան...
Չոր հացի կարօտ հիւանդ ու քաղցած.
Դողդոջ մօտենում հարուստի դռան,
Լոկ հաց է մուրում ձեռները պարզած։

Եղբայր իմ անբաղդ, եղբայր իմ տանջուած,
Տա՛ր դու անտրտունջ վճիռը բաղդի.
Հոգ չէ, հարուստը կեանքից յըղփացած,
Քեզ անվերջ պիտի մատնէ ծաղրանքի։

Շուշի

## ՇՐՋՈՒՄ ԵՄ ՄԵՆԱԿ

Շրջում եմ մենակ ընդարձակ դաշտում,
Շուրջս ամեն ինչ հանդարտ սև անդորը.
Հարհանդ ու մարմանդ զեփիւռ չէ սուլում,
Բնութիւն նիրհում լուռ խորհրդաւոր։



Յստակ վտակներ արծաթ ցոլմունքով
Ալ ծաղիկների լանջը թաց անում.
Թարմ-թարմ տերևներ մեղմիկ դողալով
Բնութեան նիրհին օրօր են կարդում։

Աստղերը պայծառ կապոյտ կամարում
Շողում են. մարում նազկան ժպիտով.
Շրջան բոլորած անձէն զրուցում,
Աշխարհ են դիտում անհուն բերկրանքով։

Ողջ-արար աշխարհ ականջ է դնում
Բնութեան գաղտնի լռիկ մրմունջին.
Հոգիս հրճւում է թովչութեան գրկում,
Քաղցր անուրջներ պատում մեղմագին։

Շուրջս ամեն ինչ վեհ, կախարդական,
Ամեն ինչ դիւթիչ՝ և կեանք, և աշխարհ.
Ա՜խ, ես ուզում եմ ապրել յաւիտեան,
Ուզում եմ ապրել վեհութեան համար։

Բայց ա՜խ, իմ սիրտ.—ապստամբ էակ—
Այնտեղ սև մահուան խորհուրդ է խորհում.
Օ՜, նա ծաղրում է բնութիւն և կեանք,
Մարդկանցից անտես ծաղրում ու տանջւում։

6-ին փետր. 1902 թ, Երեւան

## ԵՍ ԵՐԳՈՒՄ ԷԻ

Ես երգում էի լռիկ գիշերին
Վշտացած հոգու մրմունջը գաղտնի.
Զառ-վարդ ծաղիկներ, աստղեր ու լուսին,
Ուկնդիր էին իմ հեգ երգերին։

Ես ծաղիկներից ու լուսնի ժպտից
Մի փունջ հիւսեցի շքեղ ու փարթամ.
Իսկ նոցա միջին իմ վիշտ երգերից
Մի հատիկ դրի, որ քեզ ընծայ տամ։

Փունջը իմ ձեռքից դու առիր սիրով,
Ալ ծաղիկները մեղմ փայփայեցիր,
Սակայն վիշտ երգս այնտեղ տեսնելով
„Վշտի կարօտ չեմ“ մէկէն գոչեցիր։

31-ին Յուն. 1902 թ.

* * *

Հէյ, բլբուլ ջան, էդ ո՞ւր եկար,
Մեր աշխարհում վարդ չ՚կայ.
Վարդի համար մեզ հիւր եկար.
Բայց ա՛խ, մեզ մօտ վարդ չկայ։

Արեան ծովում վարդը թոշնեց,
Սուր-սուր փշեր մնացին.
Խորունդ ցաւից երգը ճնշուեց,
Ծառ ու ծաղիկ թոշնեցին։

Բահարն եկաւ, օրը բացուեց,
Հաւքեր մեզի սուդ բերին.
Դերեզմանի դուռը բացուեց
Մարդիկ արիւն լացեցին։

Արևելքից արևն ելաւ
Ոսկի ցողեց աշխարհին,



Արիւն տեսաւ, շիւան տեսաւ,
Ամպի ծոցում չքացաւ։

Քար ու քարափ մուռ մուռ լացին,
Խինդը լռեց աշխարհին.
Զոլ ու չիման աւազ դառին,
Երկինք մթնեց մեր գլխին։

Հէյ, բլբուլ ջան, էդ ո՞ւր եկար,
Մեր աշխարհում վարդ չկայ.
Վարդը թոշնեց արեան ծովում,
Վշտի ծոցում վարդ չկայ։

23-ին մայիսի

Անձրևն անցաւ. լուրթ կամարում
Անոյշ-անոյշ պլպլալով.
Ծիածանն է ցոլցլում,
Հազար ու բիւր գոյներով։

Աղջի՛կ արի՛, ելնենք, գնանք,
Հեռո՛ւ, հեռո՛ւ, քայլով մեղմիկ.
Անոր տակով մենք անց կենանք
Դու տղայ դա՛ռ, ես աղջիկ*)։

Ես հո, քեզ պէս նազ չեմ անի,
Դու նազկան ես, նազ աղջիկ,
Էրուած եարին ես չեմ մերժի
Նորա խնդրած մի պագիկ։

1902 թ. Շուշի

*) Հայ գիւղացոց մէջ աւանդութիւն կայ, որ իբր թէ ով որ ծիածանի տակով անցնի սեռը կը փոխի։

## ՓՈԽԱԴՐ. ՆԱԴՍՈՆԻՑ

Շուրջդ գիշերուայ ստուերներ ընկան,
Խորին լռութեամբ գրկուածէ այգին.
Թուփ ու ծաղիկներ խնկահոտ գարնան
Անոյշ փափկութեամբ քնում մեղմագին։

Լացող ուռիներ դալար ճիւղերով
Ննջումեն ճկուած լճակի վերան.
Երկինքը զուգուած պայծառ աստղերով
Ներհոգ դալկութեամբ վառուում աննման։

Քնիր խոնջացած, հիւանդոտ, մաշուած,
Քնիր մոռացուած, չարքաշ վիճակով,
Դառն վշտերով սիրտդ համակուած,
Ծանր կռուից յետ ընկճուած հոգով։

Թո՛ղ որ յաւիտեան անխիղճ կասկածի
Վերջին իսկ կայծեր մարեն քո սրտում.
Գաղտնի բեկրանքով վառ տեսիլների
Անյայտ խմբերը ընդգրկեն քեզի։

Թո՛ղ, որ քո հոգին թովչութեան գրկում
Մեղմ անուրջներով թախծոտ երազի
Այդպէս վերացած անյայտ եդեմում
Միտքդ սանձարձակ անվերջ թափառի։

Շուրջդ ամեն ինչ նիրհում անխռով,
Թովչութեան գրկում դու էլ քուն մտիր.
Աշխարհն է նիրհում, նիրհում անվրդով.
Դու միայն անքուն. Քնի՛ր, երազի՛ր։

1902 թ. դեկտ. 19-ին



***

Մայրիկ, հիւանդ եմ, գեղնած, դալկահար,
Այրուումէ կուրծքս, կրակ է վառուում.
Անշէջ կրակի բոցերն անդադար
Հոգիս լափումեն... և ես հառաչում։

Մայրիկ, մեռնումեմ օտար երկրում,
Զրկուած գգուանքից քաղցր մայրական,
Ղարիբ աշխարհում, օտարի դռնում,
Ես վիզս ծռած, խեղճ, անտիրական։

Ո՞վ պիտի գրկէ քո սիրած բալի
Անշունչ դիակը սառած ու կապտած՝
Ո՞վ արցունք թափէ դարիբիս վերայ,
Ո՞վ կրծքին սեղմէ կարօտով լեցուած։

Ո՞վ պիտի լռիկ գիշերուայ ժամին
Սառ գերեզմանս գրկէ, համբուրէ,
Կոկոն թառամած քո սիրած բալին
Օտար աշխարհում ո՞վ պիտի լիշէ...

1901 թ. Հոկտ. 4-ին.

* * *

Ինձ մի սփոփիր, իմ սիրտը արդէն
Յուսահատութեան խորունդ գրկի մէջ
Մեղմիկ նիրհումէ. յոյսը իմ սրտէն
Ա՜խ հեռացել է... էլ չի գայ յաւերժ։

Ես պատանեկան խանդոտ երազներ
Մեղկ բեկորներով շուրջս ցրուեցան.
Սիրտս ամայի, օ, սիրտս աւեր,
Էլ ինձ համար չէ խինդը բերկրութեան։

Յոյզերով հարուստ իմ միտքը քնքոյշ,
Մարդկանց թոնաւոր ձեռքով աւերուեց.
Հատել է եռանդ, էլ չ'կայ աշխոյժ,
Կեանքը ինձ համար այլ աշխարհ բացեց։

Միտքը կարող է նորից յարուցուել,
Իղձերը կրկին ծաղկել, բողբոջել.
Բայց վարդ յոյսերը ընդմիշտ են փշրուում
Նոքա չեն կարող նորից նոր փթթել

Ինձ մի սփոփիր, տես, դաժան կռուում
Նետ եմ ստացել կրծքիս մէջ ցցուած.
Հագչումեմ ահա, քանի իմ սրտում
Սրբազան յուսոյ աղբիւրն է ցամքած։

4-ն Յուլիսի.



* * *

*Հեծեծացի եւ գնային արտասուք.*
*եւ ասեին զի հիւրողին այսքան սուգ.*
**Խ. Վ. Դալճայեանց։**

Ասում են՝ պոէտ ինչո՞ւ միշտ լալկան
Յաւատ հնչում ես տխուր մեղեդին,
Ինչո՞ւ չես երգում դու կախարդական
Սիրոյ երգերից... անո՛յշ, մեղմագի՜ն...

Երգեր մեզ համար խինդ ու ժպիտներ...
Երգեր վարդ ծաղկունք խնկաբոյր գարնան...
Խանդոտ, մրայօն կուսի սև աչեր...
Երգեր խնդութիւն անհուն բերկրութեան։

Բայց ես ինչ երգեմ...երբոր իմ հոգին
Վաղուց արիւնոտ փոշիով պատած.
Ընդմիշտ անձնատուր դառն վշտերին...
Յաւիտեան չարքաշ, բեկ-բեկ խորտակուած...

Բայց ես ինչ երգեմ, իմ շուրջը երբոր
Լժէ դիմակներ մարդկային ազգի...
Արիւնոտ հառաչ, լացէ ամեն օր
Յուսախաբ մրմունջ...տանջուած մարդերի...

Ա՛յլ է իմ երգը, նա կոշտ կսկիծէ,
Տանջուած մարդկութեան կրծքից արձակած,
Որոնք տարաբաղդ, որոնք միշտ թշուառ...
Լալիս են անզոր, վիզները ծռած...

Որոնք դարերի բիրտ շղթաներով,
Ամուր կապկապած իրանց միտք, հոգին,
Լոկ թշուառութեամբ, աղի արցունքով...
Կամին ազատուել, ապրել միասին...

Որոնք դարբնում մարդկային հոգին,
Անարգ խաւարի, մթութեան գրկում...
Ջազիր մտքերի պսակ ճակտերին...
Մարդկանց գլխուլթիւն և սէր քարոզում։

Որոնք յղփացած կեանքի խնջոյքից,
Վեհնու վսեմը կոխում, ցեխոտում.
Ճշմարտութիւնը հալածում կեանքից...
Անարգ չարութեան սերմեր են ցանում։

Արցունք ու լացը հեգնում, ծիծաղում,
Լկտի, ամբարիշտ, վայրագ ձեռքերով
Մարդկային խաղաղ կեանքը թունոտում
Եւ իրանք հրճւում դիւային ժպտով։

Երգս հառաչէ...արցունքով ցողած.
Նա կը վրդովէ ձեր խաղաղ հոգին.
Եւ ձեզ, թշուառներ, ամենից խաբուած...
Նա մօտ կտանէ արցունքի որջին։

25-ին Յուլիս.

ՀՀ Ազգային գրադարան
NL0339805

29.897